ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն Երաժշտություն

Թեմա Հայրենասիրական երգերի ուսուցումը երաժշտության դասին

Կատարող Առաքելյան Լուսինե Խաչատուրի

Ղեկավար Մելիքսեթյան Գոհար մ.գ.թ., դոցենտ

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն……3

Հայրենասիրական երգերի ուսուցման դաստիարակչական

նշանակությունը……...5

Հայրենասիրական երգերի ուսուցման հիմնահարցերը……12

Օրինակելի դասի պլաններ……..14

Հայրենասիրության թեման Լ. Առաքելյանի հեղինակած երգերում……18

Եզրակացություն……20

Օգտագործված գրականություն……..21

ՀԱՎԵԼՎԱԾ……22

Ներածություն

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ժամանակակից հանրակրթության հրատապ խնդիրներից է՝ սովորողներին ծանոթացնել հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, նպաստել երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Այն տեղի է ունենում նաև երաժշտության ուսուցման գործընթացում՝ հայրենասիրական երգերի կատարողականն ուսուցանելիս: Այս հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորվում է նրանով, որ հենց հայրենիքի համար պայքարին, հայրենիքին, հայրնեիքի պաշտպան հերոսներին, զինվորներին ու բանակին նվիրված ազգային-ազատագրական, ժողովրդական ռազմի ու զինվորի երգերն են ազդում կրթվող սերունդների հայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետության վրա, տալիս նրանց բարոյական բարձր ուղենիշներ և նպաստում ազգային արժեհամակարգի ձևավորմանը: Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչում ներառված է որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Ժամանակակից դպրոցում այս կամ այն ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում սովորողների գիտելիքների և համապատասխան կարողությունների ձևավորման պահանջների մեջ առանցքային տեղ ունեն արժեքներն ու արժեքային համակարգի ձևավորումը, որի իրականացման ճանապարհին չի կարելի թերագնահատել նաև երաժշտության, մասնավորապես՝ հայրենասիրական երգերի ուսուցման կարևոր տեղն ու դերը: Այս առումով՝ անհերքելի է երաժշտության ուսումնասիրման գործընթացում հայրենասիրական երգերի, ազգային-ազատագրական ու ժողովրդական երգերի պատառիկների ուսուցման նշանակությունը և կարևորությունը: Վերջիններս օժտված են սովորողների արժեհամակարգի ձևավորման և նրանց մեջ հայրենասիրություն դաստիարակելու հսկայական ներուժով:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել հայրենասիրական երգերի ուսուցումը երաժշտության դասին:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակի իրականացման համար աշխատանքում առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել քննարկվող հարցի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
2. Հիմնավորել հայրենասիրական երգերի ուսուցման դաստիարակչական նշանակությունը:
3. Ուսումնասիրել և վերլուծել երաժշտության դասերին հայրենասիրական երգերի ուսուցման հիմնահարցերը:
4. Հայրենասիրական երգերի ուսուցման միջոցով բացահայտել հայրենասիրական դաստիարակության գործում դրանց արդյունավետությունը և դերը:

1. Հայրենասիրական երգերի ուսուցման դաստիարակչական նշանակությունը

Հայրենասիրությունը (լատիներեն pater - հայր, հունարեն patre - հայրենիք, patris - հայրենի) սահմանվում է որպես ազնիվ սեր դեպի հայրենիքը, հայրենի հողը, դեպի հայրենիքը՝ որպես ծննդավայր կամ երկիր, որն ընդունել է անհատը և որպես այդպիսին ճանաչվում է նրա կողմից՝ ըստ պատկանելության ներքին զգացողության, որպես բարոյական սկզբունք, նորմ և զգացում, որն առաջացել է դեռևս մարդկության ձևավորման փուլում [6]։

Երեխայի համար հայրենիքը սկսվում է տանից, հայրենիքի և նրա ավանդույթների հանդեպ սերը ներառված է «հայրենասիրություն» հասկացության մեջ։ Հայրենիքի և նրա հերոսների պատմության հետ ծանոթությունը սկսվում է դաստիարակչական գործունեությամբ, որը ներառում է տարբեր մեթոդներ՝ դիտումներ, զրույցներ, էքսկուրսիաներ, ժամանցի երեկոներ, տոնական համերգներ, հայրենասիրական երգերի փառատոներ։

Հանրակրթական ուսումնական հաստատությունների «Երաժշտություն» առարկայի ներկայիս երգացանկում ընդգրկված հայրենասիրական երգերի նշանակությունը որոշելուց առաջ նախ պետք է կանգ առնել հենց հայրենասիրության հասկացության վրա։ Վերջին տարիներին հայրենասիրությունը Հայաստանում ամենաարդիական թեմաներից մեկն է, որը լայնորեն քննարկվում է տարբեր ոլորտներում։ Հայրենասիրական երեգերի շարքում դաստիարակչական մեծ ներուժով են օժտված հայրենիքի, զինվորի, քաջքերի մասին քայլերգերը, ռազմի երգերը։ Նվիրվածությունը սեփական ժողովրդին, հայրենի երկրին, ազգին ու ազգայինին խիստ կարևոր է կրթվող յուրաքանչյուր հայ մանուկի համար։ Հենց հայրենասիրական երգերի ուսուցման ճանապարհին են դրվում հայեցի դաստիարակության, հայրենիքի հանդեպ սիրո և նվիրումի, հայրենանվեր անձի ձևավորման հիմքերը։ Ուստի երաժշտության ուսուսցման գործընթացում հայրենասիրական երգերի ուսուցումը պետք է նպատակաուղղվի հայրենիքի շահերի պահպանման համար երեխաների մեջ սխրանքների պատրաստակամություն և հայրենիքի պահպանության կարևորության գիտակցում ձևավորելուն, հայ զինվորի

ու հայ քաջերի սխրանքների, հայրենանվեր ու հայրենապաշտպան օրինակելի արարքներն արժևորելու կարողության ձևավորման նշանակալի գործին: Պատահական չէ, որ սերը սեփական երկրի հանդեպ, նրա շահերի պաշտպանությունը ներառված է մեզ ծանոթ և այդքան հաճախ հնչող ու կրկնվող «հայրենասիրություն» հասկացության մեջ:

Այս տեսանկյունից արժեքավոր են կրթական տարբեր աստիճաններում «Երաժշտություն» առարկայի դասընթացում որպես ուսումնական նյութ ներառված քայլերգերը (Մարտին Մազմանյան «Քայլերգ», Պյոտր Չայկովսկի «Փայտե զինվորների» քայլերգ, «Ուղիղ կարգով» քայլերգ, «Զինվորական» քայլերգ, «Հայրենիք», «Բարձրիկ Հայաստան», Հայրենասիրական երգեր՝ «Կովկասի քաջեր», «Տղաների քայլերգը», «Ջա՛ն հայրենիք», Առնո Բաբաջանյանի «Մեր սիրելի Երևան» և այլն): Հայրենիքի, հայրենի երկրի, հայրենի բնության, ազգային հերոսների ու քաջերի, հարազատ քաղաքի և նման թեմաները լրացնում են պատմական տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված բազմաթիվ ժողովրդական երգեր, պարունակվում են նաև ժամանակակից հեղինակների ստեղծագործություններում, ովքեր երգեր են ստեղծում «ժողովրդական ոճով»:

Քաջարի հերոսների և հասարակ մարդկանց սխրագործությունները, սերտ հարգալից ընտանեկան հարաբերությունները, հայրենիքի, հայրնեի բնության գեղեցկությունը և հայրենի քաղաքի, տան հարմարավետությունը՝ սրանք այն «հավերժական» թեմաներն են, որոնք ոչ միայն կրում են պատմական կամ սոցիալական ուղղվածության որոշ տեղեկություններ, այլև ներդաշնակ են յուրաքանչյուր մարդու հոգու հետ, որը կարող է արթնացնել ողջ լավագույնն ու բարին, այն ամենը, ինչը բնորոշ է մարդկանց [5,8]: Այսինքն՝ հայրենասիրական երգերը՝ նվիրված քաջերի սխրագործությունների, հայրենի բնօրրանի և հայրենիքի հետ կապված այլ երևույթների հետ, երեխայի մեջ արթնացնում են այն լավ ու բարի հատկանիշները, որոնք պետք է դառնան հիմք, հիմնասյուն և որի վրա պետք է կերտվի ու վերաշինվի սիրո զգացումն առ հայրենիք ու հայրենի եզերք:

Հայրենասիրությունը հասկացվում է որպես բարոյական դիրքորոշում, որն արտահայտվում է պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանքով,

հայրենիքի անկախությունը պաշտպանելու պատրաստակամությամբ, հակադրվում է ազգայնականությանը, որի հիմնական շարժառիթը ինքնահաստատումն է և իշելու ձգտումը:

Հայրենասիրությունը ենթադրում է հարգալից վերաբերմունք ինչպես սեփական, այնպես էլ այլ ժողովուրդների և նրանց մշակույթների նկատմամբ, ժողովուրդների անկախության և ինքնության իրավունքի ճանաչում: «Դա զգացողություն է, որը ժողովրդին և յուրաքանչյուր մարդու պատասխանատու է դարձնում երկրի կյանքի համար: Առանց հայրենասիրության նման պատասխանատվություն չկա: Եթե ես չեմ մտածում իմ ժողովրդի մասին, ուրեմն տուն չունեմ, արմատներ չունեմ: Որովհետև տունը ոչ միայն հարմարավետություն է, այլև պատասխանատվություն է նրա մեջ տիրող կարգուկանոնի համար, դա պատասխանատվություն է երեխաների համար, ովքեր ապրում են այդ տանը... Հայրենասիրության զգացումը ոչ մի դեպքում չպետք է շփոթել այլ ժողովուրդների հանդեպ թշնամանքի զգացման հետ» [8,55]:

Լինելով կապված մարդու զգացմունքների, զգայական և հուզական աշխարհի հետ՝ հայրենասիրությունը առավել արդյունավետորեն սերմանվում է հատկապես հայրենասիրական երգերի ուսուցման միջոցով: Երգն ու երաժշտությունը, հայրենասիրական երգերի տեքստի բովանդակությունն ու գաղափարաբանությունը ընդլայնում են երգի այդ տեսակի հայրենասիրական դաստիարակության հնարավորությունները, իսկ երաժշտազգայական հենքի վրա ուսուցումը հայրենասիրությամբ է ներշնչում յուրաքանչյուր սանի: Հայրենասիրության զգացական ընկալումը ապահովվում է հենց երաժտության միջոցով, քանի որ այն հեշտությամբ ներթափանցում է երեխայի հոգևոր աշխարհ, իսկ երգի տեքստի գաղափարը վերհանվում է երաժշտության ունկնդրման, երգ ու պարի, նվագակցության ուղեկցությամբ: Նման մոտեցմամբ հայրենասիրական երգերի ուսուցումը մեծացնում է դրանց դաստիարակչական նշանակությունը և երեխայի մեջ հայրենասիրություն դաստիարակելու ու այն նրա հոգեկերտվածքի մի մասը դարձնելու լավագույն միջոց է դառնում:

Երգը վաղուց է ճանաչվել որպես հայրենասիրական ոգի դաստիարակելու արդյունավետ միջոց: Պատմական, խրոխտ, քնարական և այլ երգերի թեմաների բազմազանությունը, ազգային մեղեդու ինքնատիպությունը, ռիթմը, վոկալ կատարողական առանձնահատկությունները ուժեղ հոգեբանական ազդեցություն են ունենում ինչպես հանդիսատեսի/ունկնդիրների, այնպես էլ հենց կատարողների վրա: Ավելին, մեր կարծիքով, այս հարցում ավելի հզոր ազդեցություն է ունենում խմբային համակարգված կատարումը:

Դաստիարակչական ազդեցության առանձնահատուկ ներուժ ունեն հայրենասեր զինվորների երգերը, որոնց ունկնդրման և կատարման միջոցով երեխաներին են փոխանցվում հայրենանվեր զինվորի ոգին, տոկունությունը, կամքը: Բանակի, զինվորի թեմաներով քայլերգերն արթնացնում են երեխաների պայքարող ոգին, հայրենի երկրի պաշտպանության սուրբ գործին միանալու, հայրենասեր զինվորների նվիրական գործը շարունակելու և բանակի ամուր հիմնասյուներից մեկը լինելու նրանց ցանկությունը, հայրենի երկրի փոքրիկ պաշտպանը դառնալու, թշնամու առաջ չընկրկելու կամք և ձգտում ձևավորում, ինչպես՝

Ուղիղ կարգով

Կանգնենք շարքով,

Շարժվենք վաշտ-վաշտ

Մենք դեպի դաշտ:

Մե՛կ, երկու՛,

Մին ձախ, մին աջ,

Մե՛կ, երկու՛,

Դե՛պ առաջ:

Մե՛կ, երկու՛,

Մին ձախ, մին աջ,

Քայլենք դե՛պ առաջ:

Շարժվենք, շարժվենք,

Լինենք հաջորդ,

Լինենք հաջորդ

Կուռ բանակին [2,7]:

Հայրենասիրական դաստիարակության մեծ ազդեցությամբ են օժտված նաև հայրենիքի գովերգման քայլերգերը, որոնցից հատկանշական է «Հայրենիք» երգը [2,9], ուր պատկերավոր և տեսանելի պատկերներով ուրվագծվում է հայրենիքն՝ իբրև անփոխարինելի մի աշխարհ, ուր ամեն բան սքանչելի է, հայրենիք, որտեղ թևածում է խնդությունը, ծիծաղը, որտեղ ամեն հայորդի ունի ճախրելու, թևածելու և վեր բարձրանալու անծայր հնարավորություններ: Երգի ունկնդրումն ու կատարումը հայրենասիրական լիցք են հաղորդում յուրաքանչյուր սանին, իսկ հնչող երաժշտությունը նրանց զգայական տիրույթով է անցկացնում հարենիքի տեսլականը:

Հայրենասիրական ամրակուռ ոգի դաստիարակելու հարցում արժեքավոր է նաև Առնո Բաբաջանյանի «Մեր սիրելի Երևան» երգը [1,9], որի ուսուցման գործընթացում երեխաները ճանաչում են իրենց դարավոր մայրաքաղաքը, նրա պատմական նշանակությունը, դարերի ընթացքում հայի դաժան ճակատագրին, ցավին ընկեր, բայց հարատևող ու նորից վերհառնող քաղաքը: Այն դառնում է անկոտրում պայքարի ոգու և կամքի, դարեր շարունակ վերածնվելու և ժամանակի հարվածները պատվով դիմակայելու, սեփական արմատները կրող անցյալը հիշելու, ճիշտ գնահատելու դերը ազգի պահպանման ու գոյատևման համար գիտակցելու լավագույն օրինակ.

Դու ունես անցյալ, քաղա՛ք իմ, դարավոր անցյալ,

Դու եղար հայոց ամրոց-բերդ, մայր քաղաք դարձար:

Պատմության դաժան հողմի մեջ շատ ցավեր տեսար,

Բայց շողաց կյանքիդ մի նոր էջ, այս փառքին հասար…

Արժեքավոր են նաև Առնո Բաբաջանյանի «Ազգ փառապանծ» երգը, «Հերոսական բալլադը»:

Հայրենասիրական երգերից հայրենասիրական դաստիարակության համար անփոխարինելի են նաև հայրենիքի փրկության, ազատության և անկախության համար պայքար մղած հայ քաջերի մասին ազգային հայրենասիրական երգերը, որոնց ուսուցումն արթնացնում է երեխաների ազատասիրական ոգին: Դրանցից դաստիարակչական առումով առանձնահատուկ է հայ ազգային-ազատագրական պայքարի նվիրյալ հերոսներից Անդրանիկ զորավարին նվիրված Կովկասի քաջեր երգը [1,25-26]:

Այս երգի ունկնդրումն ու խրոխտ ձայնով, ուժգին հնչեղությամբ և աշխույժ կատարումը կերտում է հերոս զորավարի հայրենասեր կերպարն իբրև հայրենիքի պաշտպանի լավագույն օրինակ, երեխաները երգի կատարմամբ ցույց են տալիս երաժշտության զարգացումը՝ ելնելով տեքստի բովանդակությունից:

Երգը նպաստում է մի զգացմունքից մեկ այլ զգացմունքի զարգացմանը՝ հայրենասիրական զգացմունքից դեպի հանուն սուրբ ազատության վախը հաղթահարելու համարձակության անցման զարգացմանը: Երգն ունկնրելիս և կատարելիս ստեղծվում է պայքարի տրամադրություն:

Ժամանակակից ուսումնական ծրագրերը քիչ են նախատեսում հայրենասիրական երգերի պարտադիր ուսումնասիրություն, սակայն երաժշտության յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ձգտի համալրել աշակերտների մենակատարային, անսամբլային և հատկապես խմբերգային երգացանկը նման երգերով: Այն կարող է իրականացվել ոչ միայն ընթացիկ պարապմունքների ժամանակ, այլ նաև համերգային միջոցառումների շրջանակներում՝ համերգներ, հայրենասիրական երգի մրցույթներ, փառատոներ, տարաբնույթ ելույթներ: Մարդը, ներծծվելով հայրենասիրական վեհ վիճակով, աստիճանաբար ներծծում է այն իր գիտակցության մեջ, միանում իր ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը:

Այսպիսով, ավանդաբար հայրենասիրական դաստիարակությունն իրականացվում է կրթական գործունեության այլ բնագավառների հետ համատեղ: Եվ դա անքակտելիորեն կապված է երաժշտական մշակույթի հետ: Այս մոտեցմամբ մեծանում է հայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը, քանի որ երաժշտությունը կարող է լուրջ ազդեցություն ունենալ մարդու վրա և ազդել նրա հոգևոր ու բարոյական աշխարհի վրա: Պարզ ու մեղեդային երգերը, որոնք պատմում են մեր ժողովրդի հերոսական անցյալի, նրա դժվարին ճակատագրի մասին, հեշտ է հիշել և մեր երևակայության մեջ դիմագծել կատարվածի մասին պատմող վառ պատկերները: Հայրենիքի հանդեպ սերը պետք է ձևավորել դեռևս նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Հետագայում դեռահասների համար անհրաժեշտ է շարունակել նման աշխատանքը՝ միայն մի փոքր փոփոխելով երգերի թեման և մատուցման եղանակները: Նաև երգի ազդեցության ուժը զգալիորեն մեծանում է, եթե դրան ծանոթանալն իրականացվում է ակտիվության մոտեցման հիման վրա:

Երաժշտական վառ ստեղծագործություններն արտացոլում են մարդու զգացմունքների խորությունը, որոնք կարողանում են հուզական արձագանք առաջացնել՝ դառնալով դաստիարակության միջոց:

2. Հայրենասիրական երգերի ուսուցման հիմնահարցերը

Ինչպե՞ս զարգացնել երեխաների սերը դեպի հայրենիք: Այն սկսվում է փոքրից՝ դեպի ընտանիքը, տունը և հայրենիքի հանդեպ սիրուց: Անընդհատ ընդլայնվելով՝ հայրենիքի հանդեպ այս սերը վերածվում է սիրո՝ դեպի սեփական պետությունը, նրա պատմությունը, անցյալն ու ներկան, ապա՝ ողջ մարդկությունը [4]:

Երաժշտության դասերին հայրենասիրական երգեր ուսուցանելիս, ժամանակակից երիտասարդներին ծանոթացնելով մեր երաժշտական ժառանգությանը, մենք նրանց մեջ սերմանում ենք հայրենասիրության զգացում: «Երաժշտության հիմնական առանձնահատկությունը մարդկանց միավորելու, նրանց միջև հաղորդակցության միջոց դառնալու կարողությունն է» [9,272]:

Հայրենասիրական երգերի ուսուցումը չի սահմանափակվում լոկ երգի երաժշտական կողմի ուսուցմամբ, քանի որ այդ երգերի ճիշտ կատարման և երաժշտության ընկալման գործընթացները ներառում են նաև երգերի տեքստի ուսումնասիրում: Այսինքն՝ երաժշտության ուսուցիչը պետք է նպատակ ունենա՝ հայրենասիրական երգերն ուսուցանելիս սովորողներին հասկանալի դարձնել հայրենասիրական երգի բովանդակությունը՝ դրա հիման վրա ապահովելով երգի ուսումնական (երգի ունկնդրման, կատարողականի, նոտագրման) և դաստիարակչական (հայրենասիրական դաստիարակություն) գործառույթների փոխկապակցված իրականացումը: Երգի երաժշտության և տեքստի ուսումնասիրման փոխկապակցված գործընթացն արդյունավետ է դարձնում հայրենասիրական երգերի ուսուցումը՝ նպաստելով դրա դաստիարակչական ներուժի ավելացմանը: Աշակերտներն ավելի նվիրումով, հպարտ, ոգևորված ու խրոխտ կկատարեն այն երգը, որի բովանդակությունը, բուն միտքն ու գաղափարը հայտնի է իրենց: Իրավամբ՝ հայրենասիրական երգում երաժշտական բաղադրիչի առկայությունը ուժեղացնում է տեքստի ազդեցությունը հասցեատիրոջ հուզական ոլորտի վրա, առաջին պլան է մղվում հուզականությունը: Երգի ընկալման վրա մեծ ազդեցություն են ունենում երգի կատարողի անհատական առանձնահատկությունները (խառնվածք, կատարման եղանակ, ձայնի տեմբր և այլն) [7, 115] : Այս մոտեցմամբ հայրենսիրական երգերի

կատարումը դառնում է ոչ թե լոկ երգի տեքստի կատարում, այլ դրա զգայական ընկալում, հայրենասիրական ոգու, խրոխտ և հպարտ հոգեկերտվածքի ձևավորման լավագույն միջոց:

Հայրենասիրական երգերի ուսուցումը սկսվում է կրթության առաջին աստիճանից՝ դառնալով նախադպրոցականների հայրենասիրական դաստիարակության և Հայաստանի ապագա քաղաքացու ձևավորման հիմքը: Հայրենասիրության զգացումն ինքնին չի առաջանում, այն պետք է դաստիարակել մանկուց: Դա դրսևորվում է հպարտության զգացումով սեփական երկրի ձեռքբերումներով և նրա պատմությունը պահպանելու գիտակցումով: Վերջիններս ուրույն արտահայտություն են ստանում հատկապես հայրենասիրական երգերում՝ նվիրված հայրենիքին, հայրենի երկրի պաշտպանությանը, ազատագրմանը, անցյալի հերոսների ու քաջերի հայրենանվեր գործերին, հայրենի եզերքի գովքին, դարավոր պատմությանն ու անցյալին: Երաժշտական կրթությունը և անձի մեջ հայրենասիրության զարգացումը շարունակվում է նրա ողջ կյանքի ընթացքում: Նախադպրոցականի համար հայրենիքը մայրն է, մանկապարտեզն՝ իր ընկերներով, տունը, որտեղ նա ապրում է: Իսկ նրանից, թե նա ինչպես է լսում, ինչ աչքերով է տեսնում, ինչ դասեր է ստանալու ներկայի ու պատմական անցյալի իրադարձությունների իրադարձություններից, կախված է նրա անհատականության ձևավորումից: Դրա համար պետք է օգնել երեխային՝ հայրենասիրական երգերի միջոցով բացահայտել մեր երկրի պատմական անցյալն ու ներկան [3]:

Հայ ժողովրդի կյանքի պատմական դեպքերի ու իրադարձությունների արտացոլումը հայրենասիրական երգերն են, որոնք հիմնականում վերաբերում են հայ ժողովրդի, նրա հերոս զավակների ազգանվեր պայքարին: Հատկապես ազգային հայրենասիրական երգերը շնչում են ազատասիրական ոգով:

Ստորև բերվում են մեր կողմից հայրենասիրական երգերի ուսուցման երաժշտության դասի օրինակելի պլաններ:

3. ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍԻ ՊԼԱՆՆԵՐ

Օրինակելի դասի պլան 1

Դասարան՝ 4-րդ

Առարկա՝ Երաժշտություն

Դասի թեման՝ Հայրենասիրական երգեր

Երգեցողություն՝ «Կովկասի քաջեր» երգը

Ունկնդրում՝ «Տալվորիկի կտրիճ» երգը

Նոտագրություն՝ հատված «Կովկասի քաջեր» երգից

Դասի նպատակը՝ Ուսուցանվող և ունկնդրվող երգերի միջոցով արթնացնել սովորողների հայրենասիրական ոգին:

Խնդիրները՝

1. Զարգացնել ունկնդրվող ստեղծագործությունը բնութագրելու կարողություն:
2. Զարգացնել երգը ճիշտ շնչառությամբ և առոգանությամբ երգելու հմտություն:

Դասի ընթացքը

Մտագրոհի միջոցով ճշտել սովորողների նախնական գիտելիքները և պատկերացումները հայրենասիրության վերաբերյալ: Որպես դիդակտիկ նյութ վերցնել Անդրանիկ զորավարի դիմանկարը: Համառոտ ներկայացնել նրա կյանքն ու գործունեությունը: Այնուհետև ուսուցանել «Կովկասի քաջեր» երգը: Ծանոթացնել երեխաներին երգի բովանդակությանը և սովորեցնել ֆրազներով: Ուշադրություն դարձնել կատարման որակի վրա և երգել խրոխտ, քայլերգային և առույգ:

Նոտագրում

Նոտատետրում գրել հատված ուսուցանվող երգից և կարդալ նոտաները:

Ունկնդրում

Ունկնդրել «Տալվորիկցի կտրիճ» ազգային հայրենասիրական երգը: Ուշադրություն դարձնել երգի բնույթին, թե ինչպես է երաժշտության միջոցով արտահայտում խրոխտ և հայրենասիրական ոգի: Ունկնդրման ժամանակ երաժշտությունը հնչելիս երգին ուղեկցել քայլերով և ծափերով:

Դասի ամփոփում

Կրկնելով երգը՝ դասի նպատակը իրականացվեց, քանի որ երգի և ունկնդրման միջոցով երեխաների մեջ արթնացավ հայրենասիրական երգի ճիշտ ընկալում:

Օրինակելի դասի պլան 2

Դասարան՝ 2-րդ

Առարկա՝ Երաժշտություն

Դասի թեման՝ Քայլերգի տեսակները

Երգեցողություն՝ Հայ ժողովրդական «Հայրենիք» երգը

Ունկնդրում՝ «Քայլերգի երեք տեսակները»

Նոտագրություն՝ հատված «Հայրենիք» երգից

Դասի նպատակը՝ Դաստիարակել սեր դեպի հայրենիքը:

Խնդիրները՝

1. Զարգացնել քայլերգի տեսակները լսելու, ընկալելու և տարբերելու կարողությունը:
2. Զարգացնել երաժշտական ստեղծագործության տեմպը, հնչողության ուժգնության երանգները, հնչյունների բարձրության փոփոխությունները զգալու կարողությունը:

Դասի ընթացքը

Վերհիշել նախորդ դասի նյութը, հարցերի միջոցով հասկանալ անցած դասից ինչ է յուրացվել: Կազմակերպել մտագրոհ «Հայրենիք» թեմայով. Երեխաներն արտահայտում են հայրենիքի մասին իրենց պատկերացումները: Ուսուցանել «Հայրենիք» երգը և կատարել երգին համապատասխան շարժումներ, որն արթնացնում է քայլելու ցանկություն: Ապա երգը կատարվում է խմբերով, մի խումբը երգում է, մյուսը՝ քայլում, նաև նվագակցում են ծափերով կամ դափի նվագով՝ ընդգծելով զարկերը և ռիթմը:

Ունկնդրում

Ունկնդրել ռուս կոմպոզիտոր Դմիտրի Կավալևսկու «Քայլերգի երեք տեսակները» և սովորեցնել ունկնդրել ու որոշել քայլերգի բնույթը և տրամադրությունը:

Նոտագրում

Նոտատերում գրվում են ուսուցանվող երգից հատվածներ.



Դասի ամփոփում

Դասն ամփոփել՝ կատարլով նոր երգը։

Դասի նպատակն իրագործվեց, քանի որ երգելով և ունկնդրելով առաջացավ սեր հայրենիքի նկատմամբ։

Այսպիսով, երգը ժամանակակից սերնդի համար արվեստի ամենամոտ ու հասկանալի ձևն է։ Ահա թե ինչու հենց դրանում է հայրենասիրական դաստիարակության և սովորողների զարգացման մեծ ներուժը։ Հայրենասիրական երգը միավորող օղակ է տարբեր դարաշրջանների ու սերունդների միջև՝ կապելով անցյալը, ներկան ու ապագան, ինչպես նաև պատմական հիշողության պահպանման և այն եկող սերունդներին ավանդելու միջոց։

4. Հայրենասիրության թեման Լ. Առաքելյանի հեղինակած երգերում

Լինելով երաժշտության ուսուցչուհի՝ հեղինակ եմ նաև տարբեր տարիքային խմբերի երեխաների համար նախատեսված երաժշտական գրքերի և երգերի ժողովածուների: Վերջիններս նախատեսված են դպրոցական և ցածր տարիքի երեխաների համար: Մի քանի խոսքով փորձել եմ նկարագրել «Արժանի լինենք» ժողովածուն[1]՝ նախատեսված միջին և ավագ դպրոցական տարիքի երեխաների համար:

Հայրենասիրության թեման թեև շատ է արծարծվել, բայց այն մշտապես խիստ արդիական է, առավել քան անհրաժեշտ է մատաղ սերնդին ճիշտ և հայեցի դաստիարակելու համար: Դրան է նպաստում «Արժանի լինենք» ժողովածուն: Այն ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից ընդունվել է որպես ուսումնաօժանդակ ձեռնարկ միջին և ավագ տարիքի դպրոցականների համար: Ժողովածուի վերաբերյալ Կրթության ազգային ինստիտուտի հայագիտական և սոցիալ-մշակութային առարկաների բաժնի մասնագետների կարծիքն ամբողջությամբ տե՛ս Հավելվածում: Կարծիքում մասնավորապես նշվում է՝ Երևան քաղաքի թիվ 26 դպրոցի երաժշտության ուսուցչուհի Լուսինե Առաքելյանի երգերն աչքի են ընկնում գեղեցիկ և հիշվող մեղեդիներով: Հայրենասիրական թեմայում գերիշխում է խրոխտ, քայլերգային բնույթը: Դրանք նվիրված են մեր անկախությանը, դրա համար պայքարող զինվորին, ազգային հերոսներ Գարեգին Նժդեհին, «Սասնա ծռեր» ջոկատի հրամանատար Սամվել Գևորգյանին, «Տիգրան Մեծ» աշխարհազորային խմբի ղեկավար Արմենակ Արմենակյանին և այլոց: Նշված ձեռնարկում խտացված կերպով ընթերցողին է մատուցվում բանաստեղծների (Խաչատուր Առաքելյանի, Բորիս Նադոյանի, Եղիշե Չարենցի) ապրումները երգահանի սրտում և հոգում ծնված մեղեդիների միջոցով, որը լայն արձագանք է ստացել բազմաթիվ մանուկների մեջ: Գրքի տողերից երեխան իմանում է հայոց պատմության հերոսական էջերի, կրած տառապանքների, անձնազոհության,

[1] Առաքելյան Լ., Արժանի լինենք, Միջին և ավագ դպրոցական տարիքի երեխաների համար, Երևան, ԷԴԻԹ ՊՐԻՆՏ, 2014:

ընկերասիրության, հանուն հայրենիքի անձնականը մի կողմ դնելու, իսկ ամենակարևորը՝ հաջողության, հաղթանակի հասնելու համար համազգային միասնության գաղափարի մասին: Գրքում մեծ տեղ է տրված զինվորի բարոյական կերպարին («Զինվորի նամակը» երգը): Երեխան կամ երիտասարդը, լսելով այդ հուզական, տպավորիչ երգերը, հեշտ է ընկալում, որ թեև կա սեր և աղջիկ, կան հայր և մայր, ընկեր, բարեկամ, բայց ամենաթանկն աշխարհում հայրենիքն է(«Ավագի խոսքը» երգը):

«Արժանի լինենք» ժողովածուն կոչ է բոլորին, որ ապրենք այնպես, ժողովրդին, պետությանն այնպես ծառայենք, որ արժանի լինենք հանուն հայրենիքի, հանուն մեզ զոհված քաջարի հայ մարտիկներին և, միշտ վառ պահելով սուրբ նահատակների հիշատակը, նրանց օրինակով դաստիարակենք գալիք սերունդներին: Հարկ էավելացնել, որ հայրենասիրության թեման կարմիր թելի պես անցնում է հեղինակ Լուսինե Առաքելյանի տարբեր տարիներին լույս ընծայած Մանկան աչքերով, Հրաշք թռչուն երգերի ժողովածուներում, որոնք բերված են Հավելվածում:

Եզրակացություն

Ամփոփելով երաժշտության դասերին հայրենասիրական երգերի ուսուցման խնդրի ուսումնասիրությանը նվիրված մեր հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ հիմնական եզրակացություններին.

1. Հայրենասիրական երգերը հսկայական զգացմունքային լիցք են պարունակում, որը թույլ է տալիս դիպչել տարբեր տարիքի երեխաների հոգուն: Այդ երգերը պարզ են, մեղեդային, ուստի երեխաները արագ սովորում են դրանք և սիրով ու ոգևորվածությամբ կատարում:
2. Երաժշտության դասերին հայրենասիրական երգերի ուսուցումը դառնում է բարոյականության, հայրենասիրության դաստիարակման լավագույն օրինակ, երեխաները ունկնդրում և կատարում են հայրենասիրական երգեր՝ ձեռք բերելով հարգանք ազգային-ազատագրական պայքարի հերոսների, ազգանվեր քաջերի ու զինվորների նկատմամբ և հպարտության զգացում սեփական ժողովրդի սխրանքի հանդեպ:
3. Շատ կարևոր է հայրենասիրական երգերի ուսուցման գործընթացում երաժշտական միջոցառումների անցկացումը, քանի որ երաժշտության հետ առերեսումը զարգացնում է երեխաների երևակայությունը, օգնում սերմանել սիրո զգացումներ հայրենի երկրի և շրջակա աշխարհի նկատմամբ:
4. Հայրենասիրական երգերի ուսուցումը երաժշտության դասերին նպատակաուղղվում է երեխաների մեջ բարոյական և հայրենասիրական վեհ արժեքների դաստիարակությանը, իսկ բարոյահայրենասիրական դաստիարակությունը մեր երեխաների՝ որպես իրենց երկրի արժանի, արդար քաղաքացիների կերտման երաշխիքն է:

Օգտագործված գրականություն

1. Յուզբաշյան Յ.Վ., Փահլևանյան Ա.Ա., Լուսինյան Ա.Հ., Երաժշտություն 4, Երևան, ԶԱՆԳԱԿ, 2020, 94 էջ:
2. Յուզբաշյան Յու., Փահլևանյան Ա., Երաժշտություն 2, Երևան, ԶԱՆԳԱԿ, 2021, 94 էջ:
3. Дошкольникам о защитниках отечества: методическое пособие по патриотическому воспитанию в ДОУ, под ред. Л. А. Кондрыкинской. М.. Сфера, 2006.
4. Лихачев Б.Т. Философия воспитания [Электронный ресурс]. http://thelib.ru/books/boris_timofeevich_lihachev/filosofiya_vospitaniyaread.html
5. Народное музыкальное творчество: хрестоматия, отв. ред. О. А. Пашина. СПб.: Композитор, 2007, 336 с.
6. Патриотизм. Философский словарь. Крупнейший сборник онлайн-словарей. http://www.onlinedics.ru/slovar/fil/s/patriotizm.html
7. Татубаев С. С. Певческая речь как особый способ функционирования языка. Вопросы языкознания. 1982, № 2, с. 113-118.
8. Тищенкова Т.В. Песни патриотической тематики в репертуаре обучающихся вуза культуры. Сборник конференций НИЦ социосфера. Учредители: Vedecko vydavatelske centrum Sociosfera-CZ s.r.o. Орел. 2015 №55, с. 54-57.
9. Щевич К.С. Роль песен о Великой Отечественной войне в формировании патриотического воспитания молодежи. Русский мир: Проблемы духовно-нравственно, гражданско-патриотическогп воспитания и мути их решения. Материалы Международной научно-практической конференции. Под общей редакцией С.В. Беспаловой. 2018. Издательство: Донецкий национальный университет. Донецк. 2018, с. 271-272.

ՀԱԿԵԼԿԱԾ

Լուսինե Առաքելյանի հեղինակած ժողովածուները



Երգերի ժողովածուն կարելի է գործածել որպես ուսումնաօժանդակ նյութ տարրական և ավագ դպրոցների սովորողների համար:

Ժողովածուում զետեղված են Լուսինե Առաքելյանի հեղինակած հայրենասիրական թեմաներով երգերը, որոնցից են «Դրո՛շ իմ Հայաստան», «Թանկից թանկը», «Հայոց լեզու», «Իմ հայ ժողովուրդ», «Կյանքի գնով», «Արժանի լինենք», «Հրամանատարը», «Նվիրվում է Գարեգին Նժդեհին», «Միշտ անմոռաց», «Եզակին», «Եղեռն», «Ապրիլի 24», «Ավագի խոսքը», «Երկնքի կանչով» խոսուն խորագրորը կրող երգերը:



Ժողովածուները ներառում են Լուսինե Առաքելյանի հեղինակային մանկական երգերը՝ տարբեր թեմաներով, այդ թվում՝ հայրենասիրական: Մանկան աչքեր ժողովածուում հեղինակը հավաքել է մանկական երգեր ու բեմականացումներ[2]: Երգերից հիշատակման են արժանի՝ «Ծիծեռնակ», «Ծիտիկների երգը», «Զնծաղիկ», «Այբբենարան», «Հայոց լեզուն», «Հրաշք թռչուն», «Երկնքի կանչով», «Զինվորի նամակը», «Հրամանատարը», «Աշնան երգ», «Աշնանային», «Մնա երկար» վերնագրերով ստեղծագործությունները:

Սույն ժողովածուների համար Կրթության և գիտության նախարարության ազգային ինստիտուտի կողմից տրվել են մասնագիտական կարծիքները, որոնցով Լ. Առաքելյանի հեղինակած երգերը երաշխավորվում են տարրական դասարաններում ուսուցանելու, ինչպես նաև՝ որպես ուսումնաօժանդակ նյութ նախադպրոցական տարիքի երեխների և տարրական դպրոցի սովորողների համար գործածելու համար:

[2] Երաշխավորված երգերի ցանկը բերված է Հվելվածում, էջ 25:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE

HEAD OF STAFF

№ 04/07-2/14542-12 05 12 2012թ.

Քաղաքացի Լ. Առաքելյանին
(Երևան, Նորք Մարաշ, 10-րդ փողոց, փող. 10)

Հարգելի տիկին Առաքելյան

Ձեզ եմ տրամադրում Ձեր հեղինակած մանկական երգերի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի մասնագիտական կարծիքները:

Առդիր՝ 4 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՄՀԵՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Կատ.՝ Ն.Մնացականյան
հեռ.՝ 524777

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE

HEAD OF STAFF

№ 04/07-2/14542-12 26 09 2013թ.

Երևանի Ա.Արմենակյանի անվան թիվ 20
միջնակարգ դպրոցի տնօրեն Ա.Արմենակյանին

Հարգելի տիկին Արմենակյան

Ի պատասխան ՀՀ կրթության և գիտության նախարարին հասցեագրած գրության տեղեկանում եմ, որ հաշվի առնելով ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի մասնագետների դրական եզրակացությունը, Ձեր դպրոցի երգչախմբերգության ուսուցչուհի Լուսինե Առաքելյանի հեղինակած մանկական երգերը կարող են օգտագործվել տարրական դասարաններում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՄՀԵՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Կատ.՝ Ն.Մնացականյան
հեռ.՝ 524777